

«Կենգուրու 2018» մրցույթի մասնակցության վճարների  
վերադարձման ընթացակարգ  
գործում է մինչև **2018 թ.-ի ապրիլի 16-ը** ներառյալ

«Կենգուրու 2018» միջազգային մաթեմատիկական մրցույթի համար վճարված 970 ՀՀ դրամը վերադարձվում է, եթե երեխան չի մասնակցել մրցույթին, այսինքն՝ նրա անունը չկա դպրոցի մրցույթին մասնակցող աշակերտների վերջնական ցանկում և չկա նրա պատասխանների թերթիկը:

Գումարները հետ ստանալ կարող են միայն երեխաների ծնողները՝ դիմում ներկայացնելով հետևյալ 2 տարբերակներից որևէ մեկով.

**1. «Այբ» կրթական հիմնադրամի գրասենյակ՝**

- ա) Ծնողը իր անձնագրով և վճարման անդորրագրի բնօրինակով կամ պատճենով (եթե այն կա) այցելում է «Այբ»-ի գրասենյակ (հասցե՝ ք. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ):
- բ) Ծնողը լրացնում է դիմումի ձևը:

**2. Փոստով՝**

- ա) Ծնողը նախապես զանգահարում է «Այբ»-ի գրասենյակ և տեղեկանում, թե որտեղից կարող է ստանալ դիմումի ձևը:
- բ) Ծնողը լրացնում է դիմումը և իր անձնագրի պատճենի ու վճարման անդորրագրի բնօրինակի կամ պատճենի (եթե այն կա) հետ միասին, մեկ ծրարով, ուղարկում փոստով՝ պատվիրված նամակով, «Այբ» կրթական հիմնադրամի հասցեին (ք. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ):

Տարբերակներից ցանկացածն ընտրելու դեպքում 970 ՀՀ դրամը փոխանցվում է դիմումում ծնողի նշած բանկային հաշվեհամարին, որը կարող է լինել ինչպես ծնողի անձնական հաշվեհամարը, այնպես էլ ծնողի կողմից լիազորված երրորդ անձինը: Եթե գումարը փոխանցվելու է երրորդ անձի հաշվեհամարին, հարկավոր է կցել նաև վերջինիս անձնագրի պատճենը:

**Ի գիտություն.** «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի անցկացման կարգի 6.4. կետի համաձայն **2018 թ. ապրիլի 16-ից** հետո «Այբ»-ը չի կարող վերադարձնել «Կենգուրու 2018» մրցույթի մասնակցության վճարները: